Վ. Կ. ՉԱԼՈՅԱՆ

Կյանքի 77-րդ տարում վախճանվեց Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, փիլիսոփայության պատմություն դիտության ճանաչված մասնագետ Վաղդեն Կարապետի Չալոյանը։

Վ. Չալոյանը ծնվել է 1905 թ. հունվարի 7-ին Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) քաղաքում, բանվորի ընտանիքում։ 1926 թ. ավարտելով Երևանի պետական համալսարանը, նա սկզբում դասավանդում է միջնակարգ դպրոցում, իսկ հետո՝ հանրապետության տարբեր բուհերում։ Նա որոշ ժամանակ եղել է Հայաստանի պատմության պետական թանգարանի դիրեկտոր։ Մինչև գիտահետազոտական աշխատանքի անցնելը՝ 1938 թ., Վ. Չալոյանը սովորել է Մոսկվայի փիլիսոփայության և գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում։ 1938 թ. նա նվիրվում է հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության գործին՝ դրանով իսկ հանդես գալով որպես հայագիտության մեջ այդ բնագավառի սկզբնավորող։

40 տարի առաջ, երբ Վ. Չալոյանը առաջինը ձեռնամուխ եղավ հայ փիլիսոփայության մասնագիտական հետազոտությանը, դեռևս չէր կարելի հիշատակել որևէ աշխատություն, որում թեկ թեև շատ հանգամանորեն լուսաբանվեին հայոց անցյալի մտածողների փիլիսոփայական հայացքները։ Կարելի է ասել՝ բացարձակապես խոպան էր հայագիտության այդ ասպարեզը։ Սկսելով սկզբից, հայ փիլիսոփայական մտքի սկզբնավորումից, նա նախ մենագրություն գրեց V դարի հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացու ուսմունքի (1940 թ.), ապա մեծանուն Դավիթ Անհաղթի փիլիսոփայական հայացքների մասին (1946 թ.), իսկ հետագայում, շարունակելով իր հետազոտությունները, առանձին գրքով (1959 թ.) ներկայացրեց հայ փիլիսոփայության պատմությունը նրա սկզբնավորումից սկսած մինչև XVIII դարը ներառյալ, որը 1974 թ. վերահրատարակվեց Մոսկվայում, իսկ 1975 թ. լույս ընծայվեց Երևանում հայերեն լեզվով։

Տարիների համառ աշխատանքով Վ. Չալոյանը պատկառելի ավանդ մուծեց հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության բնագավառում։ Շնորհիվ նախ և առաջ նրա ջանքերի այսօր արդեն ոչ ոք չի կասկածում, որ գոյություն ունի հայ փիլիսոփայական հարուստ միտք, որն իր պատվավոր տեղն է գրավում հայ մշակույթի դարավոր պատմության մեջ։ Այսօր արդեն շատ է առաջադիմել հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության գործը։ Գրվել են բազմաթիվ մենագրություններ՝ նվիրված առանձին հեղինակների, գրվել են ուսումնասիրություններ՝ նվիրված հայ փիլիսոփայության պատմության առանձին փուլերին ու պրոբլեմներին, բայց որքան էլ բազմապատկվեն այդ ասպարեզի նվաճումները, Վ. Չալոյանը սերունդների կողմից միշտ կհիշվի որպես այդ գործի պիոներ, որպես այդ բնագավառի սկզբնավորող ու հիմնադիր։

Լինելով միութենական մասշտաբով ճանաչված մասնագետ, Վ. Չալոյանին է հանձնարարվել գրելու «Փիլիսոփայության պատմություն» և «Փիլիսոփայության պատմությունը ՍՍՀՄ-ում» բազմահատոր կոլեկտիվ աշխատությունների հայ փիլիսոփայությանը վերա-

քերող հիմնական բաժինները, գլուխները։ Նա հեղինակ է նաև «Սովետական մեծ հանրագիտարանի», «Փիլիսոփայական հանրագիտարանի» բազմաթիվ հոդվածների։ Գլխավորապես Վ. Զալոյանի միջոցով են հայ փիլիսոփայության պատմության բազմաթիվ ներկայացուցիչները ճանաչվել միութենական ընթերցողների կողմից։

Վ. Զալոյանը մեկն էր այն հայագետներից, որը կրքոտ կերպով պաշտպանում էր Հայաստանում Վերածնության գոյության տեսակետը։ Նա այդ պրոբլեմին նվիրել է առանձին ուսումնասիրություն, որը հրատարակվել է և՛ ռուսերեն (Մոսկվայում 1963-ին), և՛ հայերեն (Երևանում 1964-ին)։

Նշվածով, սակայն, չեն սպառվում հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրությանը Վ. Զալոյանի մատուցած ծառայությունները։ 1956 թ. նա սովետահայ նշանավոր գիտնական Արշակ Ադամյանի հետ համատեղ հրատարակեց Հովհան Որոտնեցու «Վերլուծութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» աշխատության բնագիրը զուգահեռ ռուսերեն թարգմանությամբ՝ դրանով հիմք դնելով հայ փիլիսոփայական մտքի հուշարձանների հրատարակության մատենաշարին։ Նրա ռուսերեն թարգմանությամբ լույս է տեսել նաև Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» նշանավոր երկը։

Վ. Զալոյանը չի սահմանափակվել միայն հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրությամբ։ Նա հետազոտել է նաև Արևելքի և Արևմուտքի փիլիսոփայությունների առնչությունների պրոբլեմը։ Նրա «Արևելք-Արևմուտք» աշխատությունը արժանացավ ոչ միայն Սովետական Միության, այլև արտասահմանյան գիտնականների ուշադրությանը. այն երկու անգամ (1968 և 1979 թթ.) հրատարակվել է Մոսկվայում, հրատարակվել է նաև արտասահմանում։

Վ. Զալոյանն անսահման սիրով էր նվիրված իր գործին, աշխատասեր էր, սկզբունքային ու հետևողական։ Իր հարուստ գիտական-ստեղծագործական ժառանգությանը զուգահեռ նա նաև այդ հատկանիշներն է ավանդ թողել իր աշակերտներին ու գործընկերներին։

Հայաստանի կառավարությունը բարձր է գնահատել Վ. Զալոյանի ծառայությունները սովետահայ գիտությանը։ Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և մի շարք մեդալներով, նրան շնորհվել են ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործչի, ինչպես նաև Մաշտոցի անվան մրցանակի դափնեկրի պատվավոր կոչումները։

Վ. Զալոյանի պայծառ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում և սովետահայ գիտության պատմության էջերում։

Գ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ